ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության
մարզային հանձնաժողովի նիստի

19.04.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, Գեղասար, Գյուլագարակ և Ալավերդի համայնքների ղեկավարներ, ծրագրերի պատասխանատուներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության պետի պաշտոնակատարի գրության ներկայացում /պահանջների հստակեցում/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

3. ՀՀ Լոռու մարզպետի 21.02.2019թ. թիվ 62-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /Գեղասար համայնքի ղեկավարի 11.04.2019թ. թիվ 84 գրության քննարկում/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

4. Սպիտակի տարածաշրջանի Գեղասար համայնքի կողմից իրականացվելիք «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Գեղասար համայնքի ղեկավար Վարազդատ Գրիգորյան/

5. Ստեփանավանի տարածաշրջանի Գյուլագարակ համայնքի կողմից իրականացվելիք «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Գյուլագարակ համայնքի ղեկավար Միհր Գևորգյան/

6. ՀՀ Լոռու մարզպետի 21.02.2019թ. թիվ 62-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /Ալավերդի համայնքի ղեկավարի Հանձնաժողովին ուղղված 18.04.2019թ. գրության քննարկում/:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

7. Թումանյանի տարածաշրջանի Ալավերդի համայնքի կողմից իրականացվելիք «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Ալավերդի համայնքի ղեկավար Սասուն Խեչումյան/

8. Այլ հարցեր:

Հանձնաժողովը ո ր ո շ ե ց՝

Հաստատել՝

1. Գեղասար համայնքի կողմից ներկայացված «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում»ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 02.05.2019թ. – 28.06.2019թ./:
2. Գյուլագարակ համայնքի կողմից ներկայացված «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 03.06.2019թ. – 30.08.2019թ./:
3. Ալավերդի համայնքի կողմից ներկայացված իրականացվելիք «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 15.05.2019թ. – 15.08.2019թ./:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Գեղասար, Գյուլագարակ և Ալավերդի համայնքների ղեկավարներին՝ համագործակցելով զբաղվածության տարածքային կենտրոնների հետ, աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան /հավելված 21/:

2. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյանին՝

ա/ Ներկայացնել ծրագրերի հաստատման մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ,

բ/ Ծրագրերի հաստատման մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշումը տրամադրել Սպիտակի, Ստեփանավանի և Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնների տնօրեններին, ինչպես նաև Գեղասար, Գյուլագարակ և Ալավերդի համայնքների ղեկավարներին:

3. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյանին՝

Կազմակերպել Ծրագրերի ընթացքի պարբերական վերահսկման աշխատանքները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Զաղինյանը /2-33-99/